# Ա՛Յ, ՀԵՎԱ, ՀԵՎԱ ՍԻՐՏՍ
## (Մեներգ)

Սև ամպերը չեն պարզում,
Ալ եմ      հագել, չի սազում,
Հազար տարի ալ հագնեմ,
Սև ա սիրտըս, չի սազում:

Կրկնակ
Ա՛յ, հևա, հևա սիրտս,
Ճընճղկան թև ա սիրտըս.
Քանց պուտը կարմիր չը կա, }2
Բաց անեմ՝ սևա սիրտս:

Սիրտըս փըշին կը թառի
Ես իմ յարից համ չառի.
Յարըս ձեռքես առնողը,
Կրակի պես թող վառի:

Կրկն.

Վանքի ձորում խաղ ասի,
Խաղի մեջ քեզ բան ասի,
Էգուց ինձի տանում են,
Սուրբ Սարգսի պես հասի:

Կրկն.




★ Բոլոր „ց" հնչյունները ցած են հնչում